

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՅՈՒՂԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 73

ԳՅՈՒՂԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 73

Ն. ՏՐՈՒՑԿԻ

**ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ
ՅԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄԵԼԸ**

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1980

1800
1801
1802
1803
1804
1805
1806
1807
1808
1809
1810
1811
1812
1813
1814
1815
1816
1817
1818
1819
1820
1821
1822
1823
1824
1825
1826
1827
1828
1829
1830
1831
1832
1833
1834
1835
1836
1837
1838
1839
1840
1841
1842
1843
1844
1845
1846
1847
1848
1849
1850
1851
1852
1853
1854
1855
1856
1857
1858
1859
1860
1861
1862
1863
1864
1865
1866
1867
1868
1869
1870
1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

ՀԱՅԻ ՀԱՊԱՐԱԿՈՄԱՑ

№ 73

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 73

Ն. ՏՐՈՒԵՎԻ


**ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ
=ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ=**
ՑԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄԵԼԸ

16663
A 24566
H



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1980



Հրատ. № 1201

ՊԵՏՀՐԱՏԻ ՑԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալ. № 3077(բ) Տիրաժ 5000 Պատվ. 234

ՄԱՐԴԱԳԵՑԻՆՆԵՐԻ ԲԱՐԵԱՎԱԽՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄԵԼԸ

Հայաստանում խոտավետ ռայոնները (Լոռի, Աղբալա, Քոռ-Աղբյուր, Արագածի ստորոտները, Սևանա լիճը շրջապատող լեռների լանջերը և այլն) ընկած են գեղատեսիլ, ամենահարուսա
հող՝ սեահող ունեցող մարդերում։ Սննդատու
նլութերով շատ հարուստ այդ հողերը կարող ե-
նին չափազանց լավորակ խոտի շատ հարուստ
քերք տալ. և յեթե խոտավետ ռայոններում ա-
մենուրեք այնքան խոտ հավաքվեր, վորքան հո-
ղը կարող եր արտադրել, դյուշացու տավարը
ձմեռը կերով ավելի մեծ չափով ապահովված կը-
լիներ, քան այժմ։ Բայց մեր խոտհարքներն ի-
րոք շատ քիչ բերքատու յեն։ 60—70 սանտի-
մետը բարձրություն ունեցող սեղը և հեկտարից
1000—1200 կիլո խոտ հնձելը մեր խոտհարքնե-
րի համար բերքի շատ սովորական մեծություն-
ներ են, բայց չափազանց չնշին են այն հիա-
նալի հողերի համար, վորտեղ մարդագետիններն
են պանվում։

Վորոնք են այդ փոքր բերքատվության պատճառները։ Պատճառներից մեկը մեր սեահողերի բնական հատկությունների մեջ և թաղնված։ Նըրանք շատ ծանր ու պինդ են, և նրանց միջի մննդաբար նյութերի պաշարը քիչ և մատչելի սեղերի արմատներին։ սեղը հողից իր արմատների համար չի կարողանում միանդամից ստանալ նրա մեջ գանվող մննդի մեծ քանակություններ։ Յերկրորդ պատճառը խոտհարքներից անշնորհք և անտնտեսաբար ոգտվելն ե, վոր ուժասպառում ե հողը, նվազեցնում բերքը և վատացնում խոտի վորակը։ Խոտհարքներից մեծ բերք ստանալու և խոտի վորակը լավացնելու համար պետք ե սեղին սղնության գալ, ողնել նրան հնար յեղածին չափ լրիվ ոգտագործելու հողի մեջ գոնվող մննդի պաշարները։ Հարկավոր ե նույնպես խնամքով վերաբերվել խոտհարքներին, պաշտպանել ուժասպառումից և ջանադիր խնամքով լավ կացության մեջ պահել։ Այն ժամանակ խոտհարքները շատ ավելի բերքատու կլինեն, և նրանցից հավաքած խոտի առատ հունձն ավելիով կրարձնի նրանց վրա դըրած բոլոր աշխատանքները և խնամքի վրա կատարած ծախսերը։

Խոտի բերքը շատ ուժեղ կախումն ունի խոտհնձի ժամանակից։ Մարգագետնի սեղը վաղ

դարնանն եւ սկսում աճել, և աճումը շարունակվում է՝ մինչև ամառվա վերջը։ Խոտհունձն ինչքան ուշ լինի, այնքան ել ծավալով ավելի շատ հնձած սեղ կստացվի։ Այդ պատճառով ել հաճախ, ավելի շատ բերքի հետամուտ լինելով, աշխատում են ինչքան կարելի յե ուշ հնձել։ Բոլորովին սխալ ե այդ հայացքը։ Զափից դուրս աճած սեղի տերևները տեղնուտեղը մեռնում, քայլալվում են ցողունի վրա, և դրա պատճառով սեղի բերքն ամառվա վերջում ծավալով ավելի մեծ, իսկ բաշով ավելի թեթև ե դառնում։ Զափականց աճած սեղի սննդարար նլութերն ավելի քիչ են, հարդին ու փայտային մասն՝ ավելի շատ։ Սննդարար նյութերի մեծ մասը մըտնում ե սերմերի մեջ, վորոնք խոտահավաքի ժամանակ ցրիվ են գալիս։ Այսպիսով ուշացած խոտհունձն ավելի քիչ և ավելի վատ բերք ե տալիս։ Լեռնալին մարգագետիններում կատարած մեր հետազոտությունները պարզել են, վոր շատ ուշացած խոտհնձի ժամանակը մարգագետնից 20 - 25 տոկոսով, այսինքն մի ամբողջ քառորդով ավելի քիչ բերք ե ստացվում, քան կարելի լեռ սեղը ժամանակին հնձելով ստանալ, դեռ չխոսելով այն մասին, վոր նման ուշացած խոտհնձի ժամանակը միշտ ել շատ բոլորովին անսնունդ աղբ ե ստացվում՝ հարդ, ցողուն-

ներ և չորացոծ սև տերեներ։ Պետք եւ հնձել
այն ժամանակը, յերբ մարդագետնում ծաղկում
են լավագույն սեղերը՝ տերեաշատ հատիկաբույ-
սերը, մասներույսը, փեստուկը, և յերբ յերեք-
նուկի ծաղկապատ գլխիկները դեռ դորշանալ
չեն սկսել։ Այդ ժամանակ ամենասանդաբար
խոտն եւ ստացվում, և բերքը տակավին չի ըս-
կրսել ընկնել։ Մեր խոռապատ սարահարթերում
այդ ժամանակը մոտավորապես հուլիսի կեսերին
կամ միջին շուրջ եւ ընկնում։ Շատ սեղերում,
որինակ՝ Լոռում տեղ-տեղ, վորոշ տարիներում
հունձը հենց այդ ժամանակ և սկսվում. բայց
սովորաբար շատ յերկար ժամանակ ձգձգվում եւ,
այնպես վոր խոռոքի շատ փոքր ժամ է իր
ժամանակին հնձվում։

Սակայն պետք եւ ասել, վոր ժամանակ առ
ժամանակ, ճ-ճ տարին մի անգամ, չի խանդարի
խոտիունն սւշացնելը, և ահա թե ինչու։ Յերբ
հունձը ժամանակին եւ կատարվում, լավազույն
սեղերի սերմերը հասունանալ չեն կարողանում,
և նրանք չեն սերմնակալում։ Հին, մեռնող թը-
փերին չեն փոխարինում նորերը, և լավագույն
սեղերը մարդագետնից կարող են բոլորովին ան-
հետանալ։ Պետք եւ ժամանակ առ ժամանակը,
միջանիք տարին մի անգամ, նրանք զեթ մտ-
սամբ սերմնակալեն, վորազեսզի մանուկ ծիլը հը-

նարավորություն ստանա սեղերի հին թուփերին հետզհետե փոխարինելու։ Շատ խոտհարքներ, ավելի չոր տեղեբում, աղբուտվում են կերի համար բոլորովին անպետք սեղով՝ աջլորակատրով, վորը, ինքը սննդարար չլինելուց դատ, ուրիշ ավելի լավ սեղերի բերքն ել ե պակսեցնում, նրանց արմատներից մնունդը խլելով։ Այդպիսի մարգագետինները ժամանակ առ ժամանակ, նույնպես 5-6 տարին մեկ, պետք ե ժամանակից վաղ հնձել, վորպեսզի աքլորակատրը, վոր գեռ նոր ե սկսում ծաղկել, հնարավարություն չունենա սերմանակալելու (նա արմատներով ճկուղ չի տալիս)։ Յեթե այդ տարում չափազանց վաղ հնձի պատճառով բերքն ավելի քիչ լինի, հետևյալ տարիներին, յերբ աջլորակատրը կանհետանա, բերքն զգալապես կըսրածրանա։

Խոտաբեր մարգագետիններից ոգտվելու յերկրորդ շատ կարևոր հարցը մարգագետիններում արածացնելն է։ Գարնանը մեզունում, մինչև արգելք դնելը, և խոտենձից հետո, խոտհարքներում ամենուրեք արածացնում են։ Ընդհանրապես՝ խոտհարքներում արածացնելն անցանկալի յէ։ Տավարը կխճորելով պնդացնում ե հոգը և ուտում ե լավագույն սեղերը, վորոնց հաշվին փարթամորեն աճում են ավելի վատերը

(ընձախոտը, տատասկը): Յեթե արոտավայրերի
քչության կամ տնտեսական այլ պատճառներով
չի կարելի բոլորովին դադարեցնել խոտհարքներ-
ում արածացնելը, համենան զեղս ոկետք ե
կարգավորել, վորպեսզի դրանից մարդագեռնին
ինչքան կարելի լե քիչ զնաս հասնի: Դարնանն
արածացնելը պետք ե սկսել վորքուն կարելի լե
ուշ, յերբ մարդագետնի հողը չորացել ե արգեն,
այլապես տավարը խիստ կկխճորի խօնավ հողը,
կոշտեր կառաջանան, դրանց արանքներում կըս-
կըսեն աճել ճահճային խոտեր, իսկ վրաները
տատասկ: Արածացնելիս պետք ե հավասարա-
չափ ման բերել, մեկից հետո մյուս հողամասում,
դրանցից միքանիսը մյուսների հաշվին չծանրա-
բեռնելով: Արդելքը չափազանց ուշ չդնել. քա-
նի վոր մեր խոտհարքներում սեղը բավական
դանդաղ ե աճում, այդ արգելքը պետք ե տեսի
առնվազն 2—2 ու կես ամիս: Հնձից հետո ա-
րածացնելը վոչ մի դեպքում չպետք ե մինչև
ձմեռ քաշի. սառնամանիքներն սկսվելուց մի
յերկու շաբաթ առաջ պետք ե դադարեցնել ա-
րածացնելը, վորպեսզի ձնատակի խոտը կարո-
ղանա միքիչ աճել, այլապես մատաղ ծիլերն ու
պտուկները կարող են սառչել. իսկ դրանք են
հետեւյալ տարին նոր սեղ դառնում: Յերբեք և
վոչ մի պայմանով չպետք ե թուլլ տալ, վոր

խոտհարքներում խոզեր արածացնեն. դրանց արածելուց հետո իրենց փորփրած տեղերում առանձնապես առատ ու փարթամ աճում են խոշոր մոլախոտեր ու տատասկ, վորոնք խեղդում են սեղը:

Հենց այս միջոցները՝ ժամանակին հունձը և արածացնելը կարգավորելը—թուլլ են տալիս, վոր մարգաղետինն ավելի լրիվ ցուց տա իր բերքատվությունը։ Բերքն տվելի կառատանա, յեթե սեղին ելի ուրիշ միջոցներով ոգնենք հողից ավելի սնունդ հանելու։ Ինչպես ասվեց, մեր լեռնային սևահողերը հարթավայրերի խոտհարքներում և լեռնամարգային հողերը սարերի լանջերին շատ հարուստ են, քայց բույսի արմատների համար դժվար ե այդ հարստությունները լիովին ոգտագործել։ Դրանք մատչելի դարձնելու համար պիտի հետևալը ձեռնարկվի։ Նախ՝ տափանել հողը։ Արածացրած հողերը մեծ մասամբ խիստ պնդացած են, նրանք իրենց բնույթով ել այնդանալու հակամետ են, տավար արածացնելն ել ե ուժեղացնում այդ, մանավանդ գարնանը։ Հողի չափաղանց պնդանալու շնորհիվ ջուրը նրա վերին շերտերում լճանում ե և ցած չի ծծվում։ հողի մեջ ոդ ել չի թափանցում։ Սեղերի խոր արմատներին ջուրը չի հերիքում, իսկ վերին շերտերում, վորտեղ ջուրն առատ ե, հողը թըթ-

վում եւ Հողի մէջի ողի պակասությունը շատ և
խանգարում, վոր բաւահողը բռյաերի արմատ-
ների համար պետքական դառնա, ողի պակա-
սությունն արագացնում է նուև հողի թթվումն
ու ճանճացումը։ Պետք եւ փխրացնել հողի վե-
րին շերտերը, փորպեսզի հողի մէջ ջուրը հա-
վասարաչափ բաշխվի, բավականաչափ խռնա-
վացնի, այլ վոչ թե լճանա, և փորպեսզի հողին
ել ոդ տռնի, ներս թափոնցի, վոր թե հողի հա-
մար և թե սեղի արմատների համար պետք եւ

Խիստ պնդացած հողը ճանաչելու արտաքին
լավ նշանը մամուռն եւ Վորտեղ մարդու կեանում
մամուռ յերեա, կնշանակի ողը հողի ներսը դըժ-
վար և թափանցում։ Մեզանում, մեր լեռնային
խոտհարքներում այնքան ել շատ չեն խիստ մամ-
ուռկալած տեղերը, նույնիսկ հաճախ ճանճացած
տեղերում ել մամուռ չի յերեսում։ Բայց փորտեղ
վոր մամուռը խիստ դարձացած եւ, անհրաժեշտ
և հեռացնել մարդու կեանից։ Դրա լավագույն մի-
ջոցը վաղ գարնանը, հենց ձյունը հալվելուց հե-
տո հողը տոփանելն եւ հողն այդ ժամանակ մի-
այն վերենն եւ կակղած, մամուռը հեշտությունը
հանվում եւ, տափանն ել հողը չի սվաղում։ Տա-
փանի սանրած մամուռը չպետք եւ թողնել մար-
դու կեանում, այլ անպայման հեռացնել։ Վորտեղ
շատ մամուռ եւ ստացվում, կարելի յե իրքե

յամքար կամ այլ կարիքների համար բանեց-
նել:

Սակայն միմիայն մամուռ հավաքելը բավա-
կան չեւ թե մամուռը հեռացրած հողամասերում
և թե այստեղ, վրատեղ մամուռ չի յեղել, պետք
է ուշ գարնանը հիմնապես տափանելով փիրաց-
նել հողը: Այդ ժամանակ ամբողջ հողը վոչ մի-
այն արդեն փափկած եւ լինում, այլև բավակա-
նաչափ չորացած: Ավելի վաղ, յերբ խորը հալ
տված հողը գեռ շատ խոնավ եւ, տափանել չի
կարելի: Մարդագետինները տափանելու համար
զանազան տեսակի հատուկ մարդագետնային
տափաններ են գործածվում. լավագույնը այս-
պես կոչված շղթայավոր (Լաւկեյի, Դրոսսի սիս-
տեմի) և Առւրասի մարդագետնային դանակա-
վոր տափաններն են: Դրանք արտասահմանի
արտադրանք են և մեզանում գրեթե վոչ մի տեղ
չկալին, իսկ հիմա Հողժողկոմատը բերել եւ տա-
լիս, և շուտով բավարար քանակով գործի կղըր-
վեն: Յեթե այդպիսինները չկան, կարելի յե գոր-
ծադրել պողպատե կեռած ատամներով զսպա-
նակավոր տափաններ: Մարդագետնային տա-
փանների դանակների ատամները տափանի ըն-
թացքին կողով ուղղահայց դիրք ունեն. այն-
պիսի դաշտային զսպանակավոր տափաններ կան,
վորոնց ատամները պառկած են դրված.

մարդագետնում վաս են զնում և այնքան ել
լավ չեն զործում: Կարելի էր վեջապես զործա-
ծել սովորական յերկաթիւ զիզղագ տափանը,
բայց զրա արածն այնքան ուժեղ չի լինի, ի-
հարկե, ինչպես հասուլ տափաններինը: Այսու-
ամենայնիվ, յեթե հնարավորություն կա, ավելի
լավ և մարդագետինը դոնե հասարակ տափա-
նով թարմացնել, քան բոլորովին անխնամ զը-
ցել, փոք փշանա և այլասերվի:

Տափանել պետք է, ինչպես արդեն առվեց,
ուշ զարնանը, յերբ հողն արդեն չորացել է:
Պետք եւ տափանով միքանի անդամ խաչմերուկ
անցնել. նայած հողի պնդությանը, շատ կամ
քիչ անդամ անցնել, մինչև աշքով կարելի լինի
վորոշել, վոր հողը բավականաշափ վխրացած և
կունձեցը փշրված են: Ավելի ուժեղ պետք է
այն տեղերը տափանել, վորտեղ հողի խիստ պըն-
դանալուց սեզը շատ կարճ և աճում (այդպիսի
տեղեր կոռում շատ կան), ինչպես և այն տեղե-
րում, վորտեղ թոփ հատիկաբույսերը շատ են—
չոր տեղերում՝ ֆետրախոտը, ավելի խոնավ տե-
ղերում՝ ճիմերը: Մեր սարահարթային խոտ-
հարքներում հատիկաբույսերից ամառվա տու-
ջին կեսին գերակշռում են բըռմուսը և կելերի-
ան. վորտեղ սվելի շատ ըրումուս կա, հողն ա-
վելի քիչ եւ պնդացած, վորտեղ կելերիան եւ շատ,

հոգն ավելի պինդ եւ։ Շատ սկզբացած հողերում, վորտեղ ժամուռ շատ կա (ալդպիսի տեղեր մենք քիչ ունենք), կամ վորտեղ համատարած թոփ հատիկաբույսեր են աճում, միմիայն տափանելը կարող եւ և ոգուտ չտալ բնավ՝ Այսպես, տափանն անշուշտ քիչ ոգնություն եւ փշտխոտնոցների դեմ, վորտեղ փշտխութ տափարակ տեղերում ընդարձակ տարածություններ եւ բռնում. ալդ տեղերում գարնանը շատ ջուր եւ հավաքվում, իսկ ամառը ցամաքում եւ։

Ամենալավ ոգնում եւ, լեռը խոր հող ունեցող տափարակ տեղերն են տափանում, վոր չափազանց պնդացած չեն։ Պետք եւ զգուշանալ բարակ շերտ հող ունեցող տեղեր տափանելուց, վորտեղ հողի տակը ժայռ կամ խութեր կան։ Այդպիսի տեղերից տափանը հեշտությամբ կը պոկի հողը, այնպես վոր կստացվեն անհող քերծեր (վոր սարահարթերում (Լոռի և այլ տեղեր) լինում եւ նաև չափազանց շատ արածացնելուց)։ Զի կարելի նույնպես տափանել սեղ լանջերը. այդտեղ ևս տափանով հեշտությամբ կպոկվի հողի բարակ շերտն ամբողջ, վոր հետո ցած կսահի խիճ կամ ժայռ բանալով։ Տափանելու համար ամենալավ տեղերը սարահարթերն են ութեթև զառիվայրերը։ Փորձված եւ արդեն և ապացուցված, վոր ալդպիսի տեղերում տափանելն

ողուտ և բերում։ Հսուում միքանի դյուզեր ու
ագարակներ լոկ տափանելով շատ են բարձրաց-
րել իրենց խոտհարքների բերքը։

Տափանելուց շատ խոտհարքների բերքա-
տվությունը բարձրացնելու լավ միջոց եւ պա-
րարտացումը։ Թվում եւ թե մեր լեռնալին հու-
րուստ սևանողերը պարարտացման կարիք չողիակ
ունենացին։ Բայց փորձը այդ չի ցույց տալիս։ Նրանց
պարաբռացումը շատ ուժեղ կերպով մեծացնում
եւ թե սեղերի և թե հացահատիկների բերքը։ Հա-
ճախ եւ նկատվել, վոր փելինի պարարտացումով
շատ եւ մեծացել մարզագետինների սեղերի ա-
ճումը թե զեղի վեր և թե խառնթամբ։ սեղն
ավելի արագ եւ աճում, և նույնիսկ այնտեղ, վոր-
տեղ առանց պարաբռացման միայն մի խոտհունձ
եր լինում, այժմ յերկումն եւ ստացվում։ Այս-
տեղ, ըստ յերեսութին, բանն այն չե, թե վե-
լինը սեղերի արմատների համար սննդանյութե-
րի նոր հավելում եւ մտցնում հողի մեջ, այլ այն,
վոր նա սեղերին ողնում եւ իրենց արմատներով
ոգտագործելու այն սննդանյութը, վոր փելինից ա-
ռաջ հողի մեջ արդեն կար։ Փելինը ուժեղաց-
նում եւ սննդանյութերի փոտումը հողի մեջ,
հողն ավելի փխրուն, տրորված, տաք եւ դար-
ձընում, մի խոսքով՝ բարելավում եւ արմատների
սնման պայմանները։ Այդ թեկուղ հենց նրանից

ե յերեում, վոր փելինը մեր մարգագետիններում մեծապես ուժեղացնում է յերեքնուկի աճումը. բայց հայտնի յե, վոր փելինը իբրև պարարտացում պետք չի լերեքնուկին: Նշանակում ե՝ փելինը լերեքնուկին այստեղ վոչ թե նրանով ե ողնում, վոր նրա արմատներին սնունդ ե տալիս, այլ վոր նրա համար բարելավում ե սննդառության պայմանները:

Պարարտացման համար վերցվող փելինը պետք ե թարմ չլինի, այլ բավականաշատի բնբեռնած, փտած, չորացած և փխրուն: Պետք ե մարդագետնում անպալման բարակ շերտով շաղ տալ մեկ քառակուսի մետրին մոտավորապես 3-4 կիլո, այսինքն մեկ հեկտարին մինչև 30-40 տոնն: Անհավասար շաղ տված փելինը սեղի անհավասար աճում կտա, և չափազանց փելինած տեղերում կսկսի բարձր տատասկ աճել: Փելինը պետք ե շաղ տալ՝ տափանով մտմուռը հանելուց հետո, իսկ վորաեղ դեռ չի հանվել, տափանելուց առաջ: Մարգագետինը կարելի յե առանց տափանելու յել փելինել, բայց տափանելով փելինելն ավելի լավ բերք ե տալիս:

Մարգագետինների համար փելինից ել ավելի լավ ու պետքական ե փելինաջուրը: Ուստի հարկավոր ե այն հավաքել հասուկ դրա համար շինած հարմարանքներում և հետո փելինելու


ժամանակին, այսինքն գարնանը ջրել մարդագետինները։ Փելինաջուրը նրանով եւ փելինից լով, վոր հավասար եւ պարաբռացնում մարդագետինը, վորից հետո հողը միապողազ եւ սիդակալվում։ Փելինաջուրը մարդագետին տանելուց առաջ պետք եւ նույն քոնակի ջրի հետ խառնել չջրկացրած հեղուկը սեղերին կարող եւ նույնիսկ մնանել։ Մի հեկտարին հարկավոր եւ միջին հաշվով մոտ 25-30 տոնն, այսինքն զինու 40-60 մեծ տակառ ջրկացրած հեղուկը թեթև փելինաջրի ամբարը մարդագետնից բարձր եւ, ջրկացրած հեղուկը կարելի յեւ մարդագետնի առվակներով իջեցնել և հետո ցնցղել։ Կարելի յեւ նույնաղես հեղուկը շրջեցնել տակառներով, վորոնց ամբացրած են ցնցուղներ (ծակոտկեն խողովակ)։

Փելինաջուրը ևս ուժեղացնում եւ աննդանլութերի փառումը և շատ եւ արագացնում սեղի աճումը։ Նա նույնպես վոչնչացնում եւ միքանի մոլախոտեր։ Նրանով ջրջկնելուց հետո անհետանում եւ փշախոտը, ուստի և հատկապես հանձնաբարելի յեւ փելինաջրով փշախոտ լեղած տեղերը ջրելը, վորից հետո փշախոտերը նոսրանում եւ կորչում են։ Փելինաջրով կարելի յեւ պարաբռացնել թե առանց տափանելու և թե տափանելով, իհարկե, տափանելն ավելի կուժեղացնի փելինաջրի ազգեցությունը։

Նկատված ե, վոր յիթե փելինաջրով ցնցղում
են արև ժամանակ, ազգեցությունն ավելի թուլլ
ե: Ուստի ավելի լավ ե փելինաջրով ջրել ամ-
պամած յեղանակին կամ յերեկոյան դեմ: Պետք
ե նույնպես վախճառալ շատ փելինաջրուր տալուց,
պորպեսզի լավ սեղերի փոխարեն տատասկ չը-
բումնի: Ուստի չպետք ե վերցնել շատ մեծ քա-
նակությամբ կտմ չջրկացրած փելինաջրուր. պետք
չե մինուցն հողամասը տարեցտարի իրար վը-
րա պարարտացնել. մեկ պարարտացման ուժը
լիովին միջանի տարի հերիք ե:

Ուրիշ պարարտացումներ—հանքային արվես-
տական—ներկայումս մեզանում քիչ են գործա-
դրվում և չեն ել փորձված մեր մարդադետնա-
յին ու սևահողերում, այնպես վոր առայժմ
վոչինչ վորոշ բան չի կարելի ասել նրանց աղ-
դեցության մասին: Մեր խոտհարքների սևահո-
ղերը կրով բավական հարուստ են. միայն ճահ-
ճուտներում, նրանց չորացնելուց հետո, կիրը
կարող ե ոգտակար լինել: Հողժողկոմատը մո-
տակա տարիներում մեր մարդագետիններում
պարարտացման փորձեր ե կազմակերպում, և
այդ փորձերի արդյունքները պարզելուց հետո
կարելի կլինի հանքային պարարտիչների մասին
և խորհուրդներ տալը

Տնային վառարանի մոխելն ել կարող և ոգ-



ատկար պարաբռացում լինել ավելի խոնավ տեղերում, վորոնք ճահճանալու արամազիք են, վորակեղ հողը թթվում է: Վորապեսզի մոխիրը լավ աղգի, պետք է մեկ հեկատարի համար վերցնել 400—600 կիլո, դպուշորեն միապաղապ շաղ տալով: Մոխիր և այլ հանքացին պարաբռիչներ շաղ տալու համար լավ և գործածել ցանիչներ: Մոխիրը ձեռքով՝ շաղ տալու դործը կարելի յե սիայն փորձված սերմնացանների հանճնարարել. մոխիրն անհավասար շաղ տալուց նըտ կիտուկները կարող են մարգագետնի հողը տեղակեղ քոս զցել և կամ ատատակի թվիեր բռւմնելուն նպաստել:

Մարգագետինների ամենից ավելի խոնավ տեղերը, ճահճացող տարածությունները, առվակների ցած ու խոնավ ափերը պետք և չըրտցնել: Մեր սարահարթացին խոտհարքներում այդպիսի շատ տեղեր կան՝ Լոռում և Աղբարայում: Յեթև ճահճացած տեղը չոքս կողմից ջրի յելք չունեցող քարե շերտով և շըշապատված (Լոռում նման տեղեր շատ կան), չարժե այդպիսի տեղի չորացումն սկսել: պետք է քարի մեջ առուներ փորել. թանգ կնոտի ու գլխացավանք ե, և չորացրած տեղի խոտհարքի արդյունքը նույնիսկ կարող է չծածկել չորացման ծախսերը: Իսկ յեթե ջրի յելք կա, ճահճի ափերն ել

քարե չեն, կարելի յե արդպիսի ճահիճը չորացնել:

Սակայն պետք ե ասել, վոր հազվադեպ ե միանգամից անսխալ վորոշվում, թե վորտեղ, դեսի ուր և ինչ առուներ պետք ե փորել։ Ուստի ավելի լավ ե՝ առանց այդ դործը գիտցող մարդկանց ցուցմունքի չորացման չձեռնարկել, վորովինեաւ չորացման հաջողությունն ամբողջովին կախված ե առուները և նրանց ուղղությունները կանոնավոր չափուձնելուց։ Զորացրած ճահիճը ճիմի փոխարեն լավ սեղ միանդամից չի տալիս։ Ուստի ավելի լավ ե չորացումից հետո ճահիճը կրել վերցնելով 1200—2000 կիլո չհանգըրքած կիր կամ 1600—3000 կիլո մերգել (կավախառն կիր), իսկ հետո կրկնավար տալ և 2-3 տարի ցանել հացահատիկ, պիկ, վարսակ կամ լավ հերկ պահանջող բույեր (կարտոֆիլ, կերի ճոկնդեղ)։ Դրանից հետո հողը թողնել սիզակալ մի կամ, ավելի լավ, մարդագետնային խառնուրդ ցանել։

Մարդագետնային արվեստական խառնուրդներ կտղմելու և ցանելու հարցը քննարկվում ե մարդագետինների բարելավման այլ հիմնական հարցերի հետ մեկտեղ։ Մարդագետինների հիմնական բարվագումը թանգ ու բարդ, բայց ազգութիջաց եւ Վոչ Հայտատանուժ է վոչ Անդրկովկասի ուրիշ հանրապետությունների մեջ դեռ չի կի-

բառվել այն։ Իսկ քանի վոր համապատասխան փորձ չկա, առայժմ չի կարելի հանձնարարել հիմնական բարելավման այս կամ այն լեղանակը։ Յերբ կալարդվեն Հողժողկոմատի նախաձեռնած փորձերի արդյունքները, այն ժամանակ կարելի կլինի վորոշակի ցուց տալ մեր մարգագետինների հիմնական բարելավման լավագույն ձեռվերը։

Այն աեղերում, վորտեղ անձրեքիչ եւ գալիս, չոր հողերի վրա, մարգագետինները ստկավաբերեն, և նրանց սեզը շատ ել լավը չի։ Նման զեղքերում մարգագետինները կարելի յեւ արգեստական վոռոգումով լավացնել։ Վոռոգման բարդ սիստեմները շատ թահու են և խոտհարքներում իրենց վրա արած ծախսերը չեն արդարացնում։ Բայց յերբ հնարավորություն կա հեշտությամբ և եժան ջուրը մարգագետնին մոտեցնելու, յերբէք չպետք եւ դրանից հրաժարվել։ Վոռոգվող մարգագետինները միշտ ել ավելի շատ բերք եւ տալիս, և վոռոգվող մարգագետնում տարիատարու վրա միահավասարվում երեքը։ Հվոռոգվող մարգագետինների բերքը լեղանակից եւ կախված, և անանձրեւ տարիներին յերբեմն անբերքիություն ելինում, վոր անասունների սով եւ առաջ բերում։ Պետք եւ միայն վոռոգման առունեցն անցկացնելիս հետևել, վոր ջուրն իր ճամպին չլճա-

նա փոսերում, վորովինետև ալդպիսով կարելի լե
մարգագետնի ավելորդ խոնավություն և ճահճա
ցում առաջացնել:

Մարգագետինների բարելավման հիշված մի-
ջոցներից զատ պետք եւ մատնաշնել նաև սեղե-
րի ընտրովի ցանքը: Տափանելուց և պարարտաց-
նելուց հետո միշտ ել լավագույն, ցանկալի սե-
ղերը չեն ուժեղանում: Յեթե մարգագետնում
լավ սեղերը քիչ են, կամ չկան բոլորովին, բա-
րելավումից հետո վատագույնները կարող են խեղ-
դել նրանց: Դրա առաջն առնելու համար ընտ-
րովի սեղերի ցանք եւ կատարվում: Սերմերի
ընտրությունը կախված է հողից, մարգագետնի
խոնավությունից, վայրի կլիմայից և բարդ խըն-
դիր ե: Ցանելու համար սեղերի խառնուրդ կա-
նոնավոր կազմելու համար պետք եւ այդ սեղերի
բոլոր հատկությունները լավ գիտենալ: Անհնա-
րին եւ այս համառոտ զրույցի մեջ այդ բա-
վականաշափ լրիվ տալ: Մատնանշենք նաև, վոր
միշտ ել պետք եւ սեղերի խառնուրդ ցանել և վոչ
վորենե մեկ սեղ, վորովինետև չե՞ վոր մարգագետին-
ներում միշտ զանազան սեղերի խառնուրդ եւ ա-
ճաւմ, և յեթե վորենե մեկ սեղ ցանվի, ուրիշ ան-
ցանկալի սեղեր կարող են խեղդել նրան: Գե-
րադասություն պետք եւ տալ վայրի լավ սեղերի,
քան մշակովի սեղերի սերմեր ցանելուն: Մշա-

կովի սեղերն առաջին տարիները բերքը բարձրացնում են, իսկ հետո իրենք արագորեն մեռնում: Այսինչ վայրի սեղերն ավելի մատուն են և յերկար ժամանակ հավասար բերք են տալիս: Մեր մարդագետիններում ցանկալի յե ցանել այն լավագույն սեղերը, զորոնք հենց այնաեղ աճում են: Մեր մարդագետինների լավագույն սեղերն արդեն հիշվել են. զրանք են՝ վալրի յերեքնուկը, կորնգանը, բրոմուսը, անքիստ բրոմուսը, մատներույսը, փեստուկը և այլն: Մեր վայրի տիմոֆեյևկան հիւնալի սեղ և, բայց մեզանում շատ ուշ ե զարդանում և մինչև խոտհունձը լիառատ աճման չի հասնում: Շատ ցանկալի յե խոտհարքների՝ սեղերով հուտկապես հարուստ տեղերում հողամասեր թողնվեն իրեն անձեռնմխելի սերմնարաններ: Այդ հողամասերում պետք ե լավագույն սեղերի սերմերը հավաքել և ցանել սերմալին հատուկ տնկարաններում: Ալպիսով կարելի յե շատ արագ սերմերի բավականաչափ պաշար ստանալ՝ մարդագետիններում սեղեր ցանելու համար:

Ահա բոլոր առաջնակարգ հիմնական միջոցները, զորոնցով կարելի յե բարելավել մեր մարդագետինների սիզակալման գործը և բարձրացնել նրանց բերքատվությունը: Զպետք և հրաժարվել այդ միջոցներից կամ նրանց կիրառումը

յետաձկելու ինչ կարելի լե անել, պետք ե իսուցույն անել. ինչքան շուտ ձեռնարկվեն բարելավման միջոցները, այնքան ել շուտ կստացվի նրանց շոշափելի արդյունքը՝ կերի շատացումը անտեսություններում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001619



Библиотека №

ХАРЬКОВСКИЙ УНИВЕРСИТЕТ

Бібліотека ЦДБ РДМНМ
Збірка - 1930

ԳԻՆԸ 4 ԿՐԹ ՄԱՍ. ($\frac{3}{4}$ մամուլ)

A 24S66



Н. Троицкий

Улучшение лугов и уход за ними

Госиздат ССР Армении
Эривань—1930